«ԵՂԵԳ» ԲՆԱՊԱՀՊԱՆԱ-ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Վայոց ձորի մարզ
*ք.*Եղեգնաձոր
Մոմիկի Փ./Շ/ 2/2
eghegorg@gmail.com
հեռ.098402787

N 1

Եղեգնաձոր համայնքի ղեկավար
պարոն Դավիթ Հարությունյանին

<13> <02> 2025 թ.

Հարգելի՛ պարոն Հարությունյան,

«ԵՂԵԳ» բնապահպանա-սոցիալական հասարակական կազմակերպությունը, իր կանոնադրության համաձայն, նպատակ ունի իրականացնել կայուն զարգացմանն ուղղված ծրագրեր համայնքի բարելավման և բնակիչների համար հարմարավետ միջավայր ստեղծելու նպատակով: Հաշվի առնելով վերոնշյալը՝ դիմում ենք Ձեզ խնդրանքով՝ Եղեգնաձոր քաղաքի Հարավ-արևելյան թաղամասում գտնվող խաղահրապարակը մեր կազմակերպությանը անհատույց տրամադրելու համար՝ այն վերակառուցելու և պահպանելու նպատակով, առնվազն 10 (տասը) տարի ժամկետով:

Վերակառուցման շրջանակում նախատեսում ենք՝
- կառուցել սպորտային հրապարակ,
- ստեղծել մանկական խաղահրապարակ,
- իրականացնել կանաչապատում,
- կառուցել բնակիչների համար փոքրիկ զբոսայգի՝ նստարաններով և ցայտաղբյուրով,
- կառուցել տաղավար,
- ապահովել գիշերային լուսավորություն:

Մեր կազմակերպությունը պարտավորվում է խաղահրապարակի վերակառուցման աշխատանքներն ավարտել մեկ տարվա ընթացքում, ապահովելով նրա համապատասխանությունը անվտանգության և համայնքային զարգացման չափանիշներին:

Հուսով ենք, որ մեր առաջարկը կդիտարկվի դրականորեն՝ ի նպաստ համայնքի երեխաների և բնակիչների բարօրության:

Կանխավ շնորհակալ ենք համագործակցության համար և ակնկալում ենք Ձեր պատասխանը հնարավորինս կարճ ժամկետում:

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
Մուտքի թիվ 266
«13» 02 2025 թ.

Հարգանքով,

«ԵՂԵԳ» բնապահպանա-սոցիալական հասարակական կազմակերպության ղեկավար

Վարդան Հարությունյան _____